

26-753

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ  
ԳՈՐԾԻՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

# Հ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈ-  
ԼԵԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ  
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ՓՈ-  
ԽԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ)

ՀՐԱՏ. Հ Խ Ս Հ ՊԱԽԴ-Ի ՊՎ-Ի ՎԱՐՉՈՒԹՅՈՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1938 թ.

336

Խ-11



3051  
38

### ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՍ

Ստալինյան յերկու հնգամյակների տարիներում Խորհրդային Միության աշխատավորների կողմից ձեռք են բերվել համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ:

«Մեր Խորհրդային հասարակությունը հասավ այն բանին, վոր նա արդեն իրականացրեց հիմնականում սոցիալիզմը, ստեղծեց սոցիալիստական հասարակարգ...» (ՍՏԱԼԻՆ):

Դեռևս 1936 թվին, յերբ հաստատվեց Ստալինյան մեծ Սահմանադրությունը, սոցիալիստական տնտեսության տեսակարար կշիռը կազմեց.

- ժողովրդական յեկամուտում 99,1 %
- արդյունաբերության արտադրանքում 99,8 %
- գյուղատնտեսության արտադրանքում 97,7 %
- հատավաճառ ապրանքաշրջանառության մեջ 100,0 % և
- ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի մեջ 98,7 %:

Այդ թվերը պերճախոս կերպով վկայում են այն մասին, վոր սոցիալիստական սիստեմը անրաժանորեն իշխում է մեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, վոր շահագործող դասակարգերը ԽՍՀՄ-ում վերջնականապես լիկվիդացիայի յենթարկվել և հետևաբար, մեր յերկրում ամբողջապես վոչընչացված է մարդու շահագործումը մարդու կողմից:

Խոշորագույն հաղթությունը, վորը Խորհրդային յերկրի համար նոր հաջողությունների ճանապարհ է բաց արել, հանդիսանում է ժողովրդական տնտեսության տեխնիկական վերահասուցումը: Ամբողջ արդյունաբերական պրոդուկցիայի 80% ավելին արտադրում են առաջին և յերկրորդ հնգամյակների տարիներում կառուցված կամ վերակառուցված ձեռնարկությունները: Մեքենաշինարարության պրոդուկցիան, վորը մեր ինդուստրիայի սիրտն է կազմում, 1913 թվի համեմատությամբ աճել է ավելի քան 30 անգամ: Մեքենատրակտորային կայանները ար-

դեն ընդգրկում են կոլտնտեսությունների ցանքերի տարածություն 92%: Հասկավոր մշակույթների տարածության մեկ յերրորդից ավելին 1937 թվին հավաքվել է կոմրայններով:

Ժողովրդական տնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողություններն ապահովեցին աշխատավորության տնտեսական բարեկեցության և կուլտուրական մակարդակի կտրուկ վերելքը:

«... Մենք ունենք ներկայումս նոր, սոցիալիստական եկոնոմիկա, վորը չգիտե ճգնաժամեր և գործազրկություն, չգիտե աղքատություն և քայքայում և տայիս և քաղաքացիներին ունեւոր և կուլտուրական կյանքի համար հնարավորություններ» (ՄՏԱԼԻՆ):

Յերկրում լայն ծավալ ստացած ստախանովական շարժումը տանում է արտադրության հետագա աճին և ժողովրդական հարստության ավելացմանը:

Ժողովրդի անարգ թշնամիները — տրոցկիստական — բուխարինական վնասարարները, լրտեսներն ու զիվերսանտները, փորձում եյին խլել ՄՍՀՄ-ի աշխատավորությունից լայնած պայքարի միջոցով նրանց ձեռք բեքած ազատ ու յերջանիկ կյանքը: Սակայն պահածալի խորհրդային հետախուզությունը աշխատավորության ախտիվ մտանակցություններ մերկացրեց թշնամական մտադրությունները և վոչնչացրեց նրանց կրեաի բները:

Փաշիստական գործակալների բնաջնջումը ել ավելի ամրացրեց մեր յերկիրը:

Թշնամին ջախջախված է, սակայն դեռ ևս վերջնականապես չի վոչնչացված: Ձի կարելի մի բոպե անգամ մոռանալ ընկ. ՄՏԱԼԻՆԻ նախազգուշացումը այն մասին, վոր քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը, գոյություն կունենան մեզ մոտ վնասարարներ, լրտեսներ, զիվերսանտներ և մարդասպաններ՝ ուղարկված մեր թիկունքները ստարյերկրյա պետությունների գործակալների կողմից: Ահա թե ինչի համար է հարկավոր հեղափոխական զգոնությունը, վորը կոգնի մեզ ժամանակին մերկացնելու և մինչև վերջը վոչնչացնելու թշնամիներին:

Բանվորների և գյուղացիների կառավարությունը և բուրձեիկների կուսակցությունը անշեղորեն կիրառում են ստայինյան խեղացի քաղաքականությունը — խաղաղության քաղաքական

նությունը: Ահա արդեն տասնյոթերորդ տարին է, ինչ մեր յերկիրը իրեն համար նվաճեց խաղաղ սոցիալիստական աշխատանքի հնարավորություն: Այդ ժամանակաընթացքում, սոցիալիստական շինարարության հաղթությունների հետևանքով մեր յերկիրը դարձավ հզոր պետություն, իսկ մեր հարմիր Բանակն ամենաուժեղ բանակն աշխարհում:

Մեր ծաղկող հայրենիքի ուժը — խորհրդային ամբողջ ժողովրդի բարոյական-քաղաքական անխախտելի միասնության մեջն է: Այդ միասնությունն առանձնապես ակնառու կերպով արտահայտվեց կոմունիստների և անկուսակցականների բլոկի փայլուն հաղթանակով ՄՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրություններում, վորն անցկացվեց աշխարհում ամենազեմուկրատիկ Ստալինյան Սահմանադրության հիման վրա:

Խորհրդային Միության աշխատավորները գիտեն, վոր ձեռք բերված բոլոր հաջողություններով նրանք պարտական են Լենինի — ՄՏԱԼԻՆԻ կուսակցության բուրձիկյան ղեկավարությանը և նրան, ով կանգնած է կուսակցության ղեկի մոտ և տանում է մեր յերկիրը հաղթանակից — հաղթանակ — Մեծ ՄՏԱԼԻՆԻՆ:

### 1938 ԹՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՅԵՎ ՅԵՐՐՈՐԴ ՇՆԳԱՄՅԱԿԻ (ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

1938 թվի ժողովրդական տնտեսության պլանով հսկայական խնդիրներ են դրվել մեր յերկրի առաջ: Այդ պլանը նախատեսում է սոցիալիստական հասարակության հետագա զարգացումն ու ամրացումը և նախապատրաստում է պայմաններ ապագայում կոմունիզմին անցնելու համար:

Կապիտալ ներդրումները ժողովրդական տնտեսության մեջ 1938 թվին 1937 թվի դիմաց աճում են ավելի քան 30%-ով: Գործող ձեռնարկությունների շարքերն են մացվում գունավոր մետաղագործության և քիմիական արդյունաբերության խոշորագույն կոմբինատները, շահագործման մեջ են մտնում սև մետաղագործության նոր, ուժեղ ագրեգատներ — գոմնային և մարտենյան վառարաններ, գլոցաղաղգյահներ: Գործի յեն դրվում թեթև և աննդի արդյունաբերության նոր ձեռնարկություններ:

Ծավալվում է շինարարությունը այնպիսի խոշոր կառու-

ցումները, ինչպիսիք են Կուլբիշեյան հիդրոհանգույցը և Բայկալ-Ամուրյան յերկաթուղային մագիստրալը, վորոնք արմատապես վերափոխելու յեն իրենց սահմանակից շրջանների տնտեսությունները: Հազարավոր նոր բնակելի շենքեր, դպրոցներ, հարյուրավոր թատրոններ, հիվանդանոցներ, մանկապարտեզներ են նախատեսված ընթացիկ տարվա կառուցումների ծրագրումը:

Արդյունաբերության համախառն արտադրանքը 1938 թվին—1937 թվի համեմատությամբ ավելանում է 15,3%-ով: Ելեկտրոֆիկացիայի և մեքենայացման զարգացումն ապահովում է աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը:

Դաշտերի բերքատվության բարձրացման և անասնապահության արդյունավետության հիման վրա գյուղատնտեսության արտադրանքը աճելու յե 14%-ով, տրակտորների պարկը աճելու յե 16%-ով, կոմբայններինը 26%-ով:

Դրա հետ միասին աճում է աշխատավորության նյութական բարեկեցությունը: Աշխատավարձը 6,4%-ով բարձրացնելու և բանվորների ու գյուղացիների քանակը 2 միլիոն մարդով ավելանալու կապակցությամբ, աշխատավարձի ֆոնդը յերկրում ավելանում է 12 միլիարդ ուրլով:

Բնակչությունը 1938 թվին ապրանք է ստանալու 15,5 միլիարդ ուրլով ավելի, քան 1937 թվին:

1938 թվի պլանը նախատեսում է կուլտուրայի հետագա աճում և առողջապահության զարգացում: Աշակերտության թիվը դպրոցներում ավելանում է 11—12%-ով և հասնելու յե 33,3 միլիոն մարդու: Ընդունելությունը Բուհերում բարձրանում է մոտ 25%-ով և կազմելու յե 170 հազար մարդ: Հայնացվում է առողջապահության ցանցը, հատկապես ապահովելու համար պահանջները, կազմված ծննդաբերության աճման հետ: Ծննդաբերական մահճակալների քանակն այս տարի ավելանում է 20 տոկոսով, մանկամասերներում մշտական տեղերի քանակը 40 տոկոսով:

ժողովրդական տնտեսության դարգացման հսկայական ծրագրի իրագործումը 1938 թվին պահանջելու յե զգալի նյութական ծախսումներ: Պետական բյուջեն այս տարի աճելու յե 1937 թվի համեմատությամբ համարյա 20 միլիարդ ուրլով:

Մորհրդային Միությունը—միակ սոցիալիստական յերկիրն աշխարհում, գտնվելով կապիտալիստական շրջապատման մեջ,

չի կարող ձեռնառու պայմաններով դրսից անհրաժեշտ վարկեր ստանալու հույս ունենալ: Այդ պատճառով 1938 թվին, ինչպես և նախորդ տարիներում, տնտեսական շինարարության ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետք է հանդիսանան սոցիալիստական տնտեսության արդունարբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության և առևտրի կուտակումները: Դրա հետ միասին ժողովրդական տնտեսության ֆինանսավորման գործում մեծ դեր են կատարում աշխատավորության անընդհատ աճող խնայումները:

Բնակչության միջոցները տնտեսական և կուլտուրական շինարարության կարիքների և յերկրի պաշտպանության հզորությունը ամրացնելու համար ներգրավելու նպատակով, ԽՍՀՄ-ի կառավարության կողմից բաց է թողնված Յերոդդ Հեգամյակի (առաջին ատվա բաժին) պետական փոխառությունը:

Մորհրդային պետական փոխառությունները մեր յերկրի աշխատավորության մոտ անշեղորեն ոգտվում են հսկայական հաջողությունով: Մորհրդային փոխառությունների բուռն զարգացման մեջ արտացոլվում է աշխատավորության նյութական բարեկեցության աճումը: Համերաշխ բաժանորդագրվելով փոխառությանը, խորհրդային ժողովուրդը արտահայտում է իր մեծ հայրենասիրությունը, իր խորը վստահությունն ու անսահման նվիրվածությունը կուսակցությանն ու կառավարությանը, իր սաստիկ առելությունը դեպի թշնամիները: Տարեց-տարի փոխառության բաժնեգրության գումարը անընդհատ աճում է: Ստալինյան յերկու հնգամյակների տարիներում մուտքերը պետական փոխառություններից գերազանցեցին 25 միլիարդ ուրլուց, վորը այդ ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումների գումարների ավելի քան 10% է կազմում:

Կապիտալիստական յերկրներում պետական փոխառությունները հեղափոխական շարժումները ճնշելու և աշխատավորությանը կեղեքելու գործին են ծառայում: Այնտեղ փոխառության միջոցները գնում են վոստիկանության, բյուրոկրատիկ ապարատը պահելու, թալանչիական պատերազմներ նախապատրաստելու և վարելու համար:

ԽՍՀՄ-ում պետական փոխառությունները ծառայում են ժողովրդի շահերին: Փոխառության միջոցները մեր յերկրում

նպատակում են սոցիալիստական հայրենիքի բարդավաճմանը, և նրա հարստության ու հզորության աճմանը: Ահա թե ինչու աշխարհում չկա այլ յերկիր, վորտեղ պետական փոխառությունները ոգտվեյին աշխատավորության այնպիսի լայն ոժանդակությամբ, ինչպես Խորհրդային Ֆեդերում: 50 միլիոն մարդ հանդիսանում են խորհրդային պետական փոխառությունների պահողներ:

Խորհրդային պետական փոխառությունները պարտատոմսեր պահողներին բերում են զգալի յեկամուտներ: Մինչև 1938 թիվը պետությունը վճարել է բնակչությանը ավելի քան յերեք միլիարդ ուրբու պարտատոմսերի շահույթներ և տոկոսներ:

Տրոցկիստական րուխարիյան ֆուսարարները, վորոնք բուն էյին դրել Ֆինանսական մարմիններում և խնայողական դրամարկղներում, ձգտում էյին քայքայել խորհրդային պետական փոխառությունների հաջողությունները և թուլացնել մեր յերկրի ֆինանսական հզորությունը: Թշնամիները սխալվեցին: Նրանց վոճբադորժ գործունեությունը մերկացվել է և նրանք վոչնչացվել են: Բոլշևիկներն լիկվիդացիայի յենթարկելով ֆուսարարության հետևանքները, ապահովենք խորհրդային պետական փոխառությունների ել ավելի հաջող զարգացումը:

Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժին) փոխառության բայ թողնելը զուգադիպում է միութենական և Ինքնավար Հանրապետությունների Գերազույն Խորհուրդների ընտրությունների ընտրական կամպանիայի ավարտմանը: Ընտրական կամպանիան առաջ բերեց Խորհրդային Միության ժողովուրդներին բացառիկ քաղաքական վերելք, վորոնք ցուցադրեցին իրենց համախմբվածությունը կոմունիստական կուսակցության և սիբիլի առաջնորդ ընկ. ՍՍԱԼԻՆԻ շուրջը: Այդ վերելքը և աշխատավորության համախմբվածությունը նոր փոխառության հաջող իրացման գրավականն են հանդիսանում:

### ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ (ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԲՄԺԻՆ) ՓՈՒԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժին) պետական փոխառությունը կառավարության կողմից բաց է թողնված 5 միլիարդ ուրբի գումարով:

Փոխառության ժամկետն է 20 տարի:

Փոխառությունը բաղկացած է յերկու մասց-անպայման շահող և տոկոսաբեր: Պարտատոմսերի յեկամուտները վճարվում են կամ շահույթներով — անպայման շահող մասի համար, կամ տոկոսներով (տարեկան 4 տոկոս) ըստ կարոնների — տոկոսաբեր մասի համար:

Փոխառության անպայման շահող մասում կան 500, 200, 100, 50, 25 և 10 ուրբիանոց արժողություն ունեցող — պարտատոմսեր, իսկ տոկոսաբեր մասում — 500, 200, 100 և 25 ուրբու արժողություն ունեցող պարտատոմսեր: 25 և 10 ուրբու արժողություն ունեցող պարտատոմսերը նախատեսված են պարտատոմս պահողներին տալու միայն այն դեպքում, յերբ ըստ բաժնեգրության գումարի չի կարելի տալ ավելի խոշոր արժողության պարտատոմսեր: Մնացած արժողություն ունեցող պարտատոմսերի ընտրությունը, ինչպես և փոխառության մասի ընտրությունը թողնվում է բաժնեգրվողների հայեցողությանը:

Անպայման շահող մասի համար տարեկան տեղի յե ունենում 4 խաղարկություն: Հետևաբար 20 տարվա ընթացքում տեղի յե ունենալու 80 խաղարկություն: Այդ ժամկետի ընթացքում յուրաքանչյուր պարտատոմս անպայման շահում է: Ամեն մի խաղարկությունում խաղարկվում են 150, 200, 500, 1000 և 3000 ռ շահույթներ՝ 100 ուրբու պարտատոմսի համար: Ծանած գումարի մեջ մտնում է նաև պարտատոմսի անվանական արժեքը և հետևվապես շահումը վճարելիս պարտատոմսը մարվում է և հետագա խաղարկություններին չի մասնակցում: 10, 25 և 50 ուրբու պարտատոմսերի համար, վորոնք հանդիսանում են 100 ուրբու պարտատոմսի մասերը վճարվում է 100 ուրբու պարտատոմսին ընկած շահումի համապատասխան մասը  $\frac{1}{10}$ ,  $\frac{1}{2}$ ,  $\frac{1}{1}$ : 200 և 500 ուրբու պարտատոմսերը համապատասխանորեն ունեն միևնույն ներխայի յերկու կամ հինգ համարներ: Այդ համարներից յուրաքանչյուրին միաժամանակ ընկնում է առանձին շահում:

Փոխառության շահույթները խաղարկությունները կատարվում են այնպիսի ձևով, վոր միևնույն սերիայի բոլոր պարտատոմսերը (յուրաքանչյուր սերիայում կան պարտատոմսերի 50 համարներ) շահում են միանգամից: Յեթե սերիայի համարին ընկավ 150 կամ 200 ուրբու շահում, ապա նման շահույթները վճարվում են այդ սերիայի պարտատոմսերի բոլոր 50 համարներին: 500, 1000, կամ 3000 ռ. շահույթները կարող են ընկ-

նել միայն այս կամ այն սերիայի պարտատոմսերի 50 համար-  
ներից մեկին, իսկ նույն սերիայի պարտատոմսերի մնացած 49  
համարներն այդ դեպքում շահում են 150-ական ուրբլի: Յեղնե-  
լով դրանից 500 ուրբլ. արժողութիւն ունեցող պարտատոմսերը,  
վորոնք ունեն միևնույն սերիայի 5 համարներ, կարող են միա-  
ժամանակ տանել 5 շահում — 150 ական կամ 200-ական ուրբլի  
կամ 1 շահում 500 ուրբլ. և 4 շահում — 150-ական ուրբլու, կամ  
1 շահում — 1000 ուրբլ. և 4 շահում — 150-ական ուրբլ. կամ թե 1  
շահում — 30 0 ուրբլ. և 4 շահում 150-ական ուրբլու:

Ճիշտ այդպես 200 ուրբլ. արժողութիւն ունեցող պարտա-  
տոմսերը, վորոնք ունեն միևնույն սերիայի յերկու համարներ,  
կարող են միաժամանակ շահել 2 շահում 150-ական ուրբլի կամ  
200-ական ուրբլի, կամ 1 շահում 500 ուրբլի և 1 շահում 150 ուրբլի,  
կամ 1 շահում 1000 ուրբլի և 1 շահում 150 ուրբլի, կամ 1 շա-  
հում 3000 ուրբլի և 1 շահում 150 ուրբլի:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերն ունեն կտրոններ, վո-  
րոնցով ամեն տարի — դեկտեմբերի 1-ին, վճարվում է յեկամուտ  
պարտատոմսի անվանական արժեքի 4 տոկոսի չափով: Այդ պար-  
տատոմսերը շահումների խաղարկութիւններին չեն մասնակի-  
ցում:

Փոխառութիւն անպայման շահող մասը 20 տարվա ժամա-  
նակամիջոցում աստիճանաբար մարվում է պարտատոմսերի  
շահումները վճարելու հետ միասին: Տոկոսաբեր մասի պարտա-  
տոմսերի մարումը (հետ գնումը) տեղի յե ունենում, սկսած  
1954 թվից, հինգ տարվա ընթացքում, ամեն տարի հավասար  
մասերով:

Անպայման շահող մասի պարտատոմսերը, վորոնք շահել  
են, տոկոսաբեր մասի պարտատոմսերը, վորոնք յենթակա չեն  
մարման, ինչպես և այն կտրոնները, վորոնց ժամկետը լրացել է,  
ներկայացնելուց վճարվում են խնայողական դրամարկիզների կող-  
մից մինչև 1959 թ. դեկտեմբերի 1-ը: Այդ ժամկետան անցնելուց հետո  
փոխառութիւն պահողը շահումները, պարտատոմսերի արժեքները  
և կտրոններով տոկոսները ստանալու իրավունքը կորցնում է:

Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժին) փոխառու-  
թիւն պայմաններում առանձին հետաքրքրութիւն է առաջացը-  
նում շահումների քանակի դասավորումը ըստ փոխառութիւն  
ըրջանառութիւն տարիներին:

Փոխառութիւն բաց թողնելուց հետո նրան առաջին տարվա  
ընթացքում անպայման շահող ամեն մեկ միլիոն ուրբլու պար-  
տատոմսերից, 40,000 պարտատոմսեր արդեն շահում են կամ  
միջին հաշվով ամեն մի 25 պարտատոմսից մեկը: Նույն քանակի  
շահումներ տեղի յեն ունենալու և փոխառութիւն ըրջանառու-  
թիւն յերկրորդ տարվա ընթացքում: Փոխառութիւնը բաց թող-  
նելուց հետո առաջին 5 տարում մեկ միլիոն պարտատոմսերից  
շահելու յեն 182,000 պարտատոմսեր, այսինքն միջին հաշվով  
յուրաքանչյուր 6-րդ պարտատոմսը:

Փոխառութիւն ըրջանառութիւն առաջին տարիներում շահե-  
լու նման մեծ հարմարութիւն առաջին անգամ սահմանված է  
Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժին) փոխառութիւն  
համար:

### ՓՈՒՍՈՒՅՑԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փոխառութիւն իրացումը պետք է անցկացվի լայն բացա-  
տրական աշխատանքների և ամեն մի աշխատավորին փոխառու-  
թիւնը կամովին մասնակից անելու հիման վրա:

Փոխառութիւն իրացումը բանվորների և ծառայողների և  
քաղաքային այլ բնակչութիւն մեջ անց է կացվում կոլլեկտիվ  
բաժանորդագրութիւն կարգով:

Բաժանորդագրութիւնը պարտատոմսեր ձեռք բերող բա-  
ժանորդներին պարտատոմսերը մաս-մաս վճարելու համար տըր-  
վում է 10 ամիս ժամանակ: Այդ ժամանակաընթացքում բաժա-  
նորդագրութիւնը վճարվում է ամեն ամիս, հավասար մասերով:

Փոխառութիւնը բաժանորդագրվելիս բանվորներն ու ծառա-  
յողները ձեռնարկութիւն կամ հիմնարկութիւն հաշվապահու-  
թիւնը հանձնարարութիւն են տալիս աշխատավարձից պահելու  
բաժանորդագրութիւն մուծումները: Առաջին մուծումը պետք է  
պահվի հուլիսի առաջին կեսի աշխատավարձից:

Փոխառութիւն պարտատոմսերը բաժանորդներին տրվում  
են նրանց արժեքը լրիվ վճարելուց հետո, վճարվելիք աշխատա-  
վարձի հետ միաժամանակ, վորից պահվում է բաժանորդագրու-  
թիւն վերջին մուծումը:

Բանվորների և ծառայողների մեջ փոխառութիւն բա-  
ժանորդագրութիւնը անց է կացվում «յերկու-յերեք շաբաթվա  
վստահել փոխ տանք աշխատավորութիւն պետութիւնը» լո-  
զունգով:

Բանվորների և ծառայողների կոլեկտիվներում փոխառութան իրացումը կազմակերպում և անցենկացնում պետվարկին և խնայողորժին ոժանդակող հանձնաժողովները, կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունների ղեկավարությունը և հասարակայնություն լայն մասնակցությունը:

Ոժանդակող հանձնաժողովները փոխառության համար տանում են մասսայական-քաղաքական աշխատանք և անցենկացնում փոխառության բաժնեգրությունը, հսկում են փոխառության հաշվառքի և հաշվետվության զրկածքին հիմնարկությունների և ձեռնարկությունների հաշվապահություններում, ինչպես և հաշվարկումների ճշտությունը բաժանորդների հետ ու պարտատուների ժամանակին ներսց հանձնումը:

### ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՓՈՒԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ

Պետվարկին և խնայողորժին ոժանդակող հանձնաժողովների խնդիրները կայանում են նրանում, վորպեսզի լայն, ծավալուն, մասսայական-քաղաքական աշխատանքների և փոխառության իրացման ժամանակ կամավորությունը պահպանելու հիման վրա, ձգտել ընդգրկելու բոլոր բանվորներին և ծառայողներին փոխառության բաժնեգրությունը, նրանց յերկու-յիւրեք շաբաթվա վատակի չափով: Այդ խնդիրը կարող է հաջող իրականացվել պայմանով, յեթե փոխառության բաժանորդագրությունը մանրադնին նախապատրաստվի և կազմակերպված անցկացվի, վորպես տնտեսական-քաղաքական կարևորագույն միջոցառում:

Մինչև փոխառության բաժանորդագրություն սկսելը տնտեսական և քուրպ ցեխերում և բաժիններում առանձնացնել ոժանդակող հանձնաժողովների լիազորներ, վորոնք անմիջականորեն կանցկացնեն բաժանորդագրությունը: Լիազորներին պետք է առանձնացնել այն հաշվով, վորպեսզի նրանցից յուրաքանչյուրը սպասարկի վոչ ավել 40—50 հոգի բանվոր-ծառայողներ: Լիազորները կարող են լինել առավելագույն ակտիվ և առաջավոր ընկերներ, առաջին հերթին ստախանովականներից և հարվածայիններից, վորոնք բանվորների և ծառայողների մտտ հեղինակություն և լիակատար վստահություն են վայելում: Նարկավոր է հաշվի առնել այն ակտիվիստներ, մասսայական-քաղաքական աշխատանքների կուսակաժ մեծ վորձը, վորոնք աշխատել են

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և Միութենական ու Ինքնավար Հանրապետությունների Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական տեղամասերում: Այդ ընկերները կարող են մեծ ոգուտ տալ փոխառության իրացմանը, վորպես ազիտատարներ և կազմակերպողներ:

Լիազորներ ընտրելիս, անհրաժեշտ է ցուցաբերել զգոնություն, թույլ չտալով, վոր փոխառության իրացումը հանձնարարվի մարդկանց, վորոնք քաղաքական վստահություն չեն վայելում: Անհրաժեշտ է լիազորներին մանրադնին հրահանգում տալ, չսահմանափակելով այդ հրահանգումը միայն բաժանորդագրության անցկացման կարգի մասին տրվող գործնական ցուցմունքներով: Լիազորը առաջին հերթին պետք է լինի փոխառության զործի ազիտատորը. գրա համար նա պետք է հստակ պատկերացում ունենա փոխառության տնտեսական-քաղաքական նշանակություն մասին:

Ցեխերի և բաժինների կուսակազմակերպիչներին փոխառության իրացմանը նախապատրաստելու նպատակով, անհրաժեշտ է նրանց հավաքել և տեղեկացնել փոխառության բաց թողնելու և բաժանորդագրություն անցկացնելու կարգի մասին: Բացի այդ, հարկավոր է ազիտատորների և պրոպագանդիստների համար նոր փոխառության հարցերի մասին անցկացնել սեմի նոր

Անհրաժեշտ է բաժանորդագրություն անցկացնելու համար խնայողական զրամարկդներից ժամանակին ստանալ ազիտացիոն նյութերն ու բաժանորդագրության թերթերը և բաժանել այն ցեխերին և բաժիններին բաժանորդագրության սկզբից, ապահովելով ամեն մի լիազորին բաժանորդագրության թերթերով: Խնայողական զրամարկդներից ազիտացիոն նյութերը ստանալուց անկախ, հարկավոր է ժամանակին պատրաստել ձեռնարկության կամ հիմնարկության ձևավորումը, փոխառության բաժնեգրություն անցկացնելու համար: Պատրաստել համապատասխան լուզուզներ, շխտներ, պանս և այլն:

Ոժանդակող հանձնաժողովը նախորոք ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունից պետք է ստանա ձիշտ տեղեկություններ բանվորների և ծառայողների քանակի և նըրանց աշխատավարձի Ֆոնդի մասին, ինչպես ձեռնարկության կամ հիմնարկության վերաբերյալ ամբողջապես, այնպես էլ ըստ առանձին ցեխերի և բաժինների: Այդ տեղեկությունները նրա

համար են հարկավոր, վորպեսզի հետևել տվյալ կոլեկտիվի ան-  
դամների ընդգրկման չափին փոխառությունն բաժանորդագրու-  
թյանը, ինչպես և փոխառությունն իրացման ընթացքին և բա-  
բաժանորդագրությունն հետևանքներին:

Փոխառությունն բաց թողնելու մասին կառավարությունն վո-  
րոշումը ազդեցություն հայտարարելու կամ թերթերում տպագրե-  
լուց հետո, անհրաժեշտ է իսկույն և յեթ փակցնել լողունները,  
աֆիշաները, պլակատները, դնել շշիտներ, պաննո և այլ գե-  
ղարվեստական ազդեցություն նյութեր:

Բաժանորդագրությունը պետք է նախորդի ժողովները և  
միտինգները, նվիրված փոխառության բաց թողնելուն: Կարճ և  
համոզեցուցիչ զեկուցումներում բանվորներին և ծառայողներին  
պետք է պատմել Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարու-  
թյամբ, թշնամիների դեմ մղած անողոր պայքարում ձեռք բեր-  
ված սոցիալիստական շինարարության հաջողությունների մա-  
սին ԽՍՀՄ-ում, 1938 թվի ժողովրդական անտեսությունն զարգաց-  
ման պլանի մասին, ինչպես և փոխառությունն նշանակություն և  
պայմանների մասին:

Սոցիալիստական շինարարության հաջողությունները ԽՍՀՄ-  
ում պետք է լուսարանել նույնպես տվյալ քաղաքին, շրջանին,  
ձեռնարկությանը վերաբերվող որինակներով: Ժողովներն ու մի-  
տինգները պետք է անցկացվեն բանվորներին և ծառայողներին  
կոչ անելու նշանաբանով, փոխառությունն համերաշխ բաժանոր-  
դագրվելու համար:

Փոխառությունն իրացման սկզբին անհրաժեշտ է ապահովել  
քաղաքատիրաժ և պատի թերթերի լույս ընծայելը, նվիրված փո-  
խառությունն բաց թողնելուն: Հետագա որերին թերթերը պետք  
է լուսարանեն բաժանորդագրության ընթացքը ձեռնարկություն-  
նում կամ հիմնարկությունում:

Փոխառությունը ժողովրդականացնելու համար անհրաժեշտ է  
մասնակից դարձնել տեղական ուղից ցանցին (փոխառությունն նշա-  
նակություն և պայմանների ու բաժանորդագրությունն ընթացքի մա-  
սին նյութեր հաղորդելը), գեղարվեստական ինքնագործունեյու-  
թյուն (կարճ գեղարվեստական յերաժշտական մոնտաժ, նվիրված փո-  
խառությունը), ֆիզկուլտուրային կազմակերպություններին (վազ-  
քեր, եստաֆետներ, նվիրված փոխառությունն իրացմանը) և այլն:

Փոխառությունն բաժնեգրությունը պետք է սկսել ժողով-

ները և միտինգներն անցկացնելուց հետո, անմիջապես: Ոժան-  
դակող հանձնաժողովների լիազորները բաժանորդագրու-  
թյանն թերթերով մոտենում են յուրաքանչյուր բանվորին կամ ծառա-  
յողին և պարզում փոխառությունն բաժանորդագրվելու նրանց  
ցանկությունը: Բաժանորդագրությունն թերթերում բանվորները  
ցույց են տալիս բաժանորդագրությունն գումարն և պարտատոմ-  
սերի արժողությունը, վորը նրանք ցանկանում են ստանալ: Ի-  
րենց բաժնեգրությունը փոխառությունն, ինչպես և ձեռնարկու-  
թյան կամ հիմնարկության հաշվապահությունը բաժանորդագրու-  
թյանն վճարման համար մուծումներն աշխատավարձից պահելու  
հանձնարարությունը ամեն մի բաժանորդ, բաժանորդագրու-  
թյանն թերթերում հաստատում է իր անձնական ստորագրությամբ:  
Բաժանորդագրությունն թերթերում նշումները պետք է անել պարզ,  
առանց վորևէ ջնջումների և ուղղումների:

Լիազորները պետք է հասնեն այն բանին, վորպեսզի բոլոր  
բանվորներին և ծառայողներին ընդգրկեն փոխառությունն բա-  
ժանորդագրությունն մեջ, նրանց յերկու-յերեք շաբաթվա վաստա-  
կի չափով: Ընդ վորում, վորևէ մի ստիպողականությունն վոչ մի-  
դեպքում թույլ չպետք է տրվի: Խորհրդային պետական փոխա-  
ռությունների հաջողությունը հիմնված է աշխատավորության  
բարձր քաղաքական գիտակցության վրա: Ամենաչնչին ստիպու-  
ղականությունը, ինչ ձեռով էլ վոր նա արտահայտվելիս լինի,  
հակառակ է խորհրդային փոխառությունների իրացման հիմնա-  
կան սկզբունքին — լրիվ կամավորության սկզբունքին, վարկարե-  
կում է խորհրդային փոխառությունները և զբանով իսկ վնաս-  
ում է նրան:

Չի կարելի մոռանալ, վոր այս կամ այն տեղում դեռևս  
պահպանվել են մինչև այժմ չմերկացված թշնամիների տակաճ-  
ները: Թշնամին անշուշտ սիրտ չի անի բացահայտորեն դուրս  
գալ փոխառությունն դեմ: Մակայն դա վոչ մի դեպքում չի նշա-  
նակում, վոր նա փորձ չի անի խանգարելու փոխառությունն հա-  
ջող իրացմանը: Հարկավոր է անդադրում բոլշևիկյան զգոնու-  
թյուն նրա համար, վորպեսզի բաց անել և մերկացնել փոխա-  
ռությունն հաջողությունն թուլացմանն ուղղված թշնամական գոր-  
ծողությունները:

Ձեռնարկությունների և հիմնարկությունների ոժանդակող  
հանձնաժողովները չպետք է սահմանափակեն իրենց դերը բա-

ժանորդագրությունը իրենց կուլեկտիվներում միայն անցկացնելով: Ներգրավելով ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի և Միութենական ու ինքնավար Հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրություններում ընտրական կամպանիայի ժամանակաշրջանում աշխատած լայն ակտիվը, ոժանդակող հանձնաժողովները պետք է ծավալեն բացատրական աշխատանք տընային տնտեսուհիների, թոշակառուների, բնակարանային տընտեսության աշխատողների և այլոց մեջ ու ոժանդակեն բաժանորդագրության անցկացմանը այդ խմբերի աշխատավորության մեջ:

Փոխառության բաժանորդագրությունը բանվորների և ծառայողների մեջ անցեկացվում կամ բաժանորդագրության թերթերում, վորը նախատեսնված է բաժանորդագրվողների խըմբերի համար, կամ անհատական բաժանորդագրման քարտերում, ամեն մի բաժանորդագրվողի համար առանձին: Լիազորներն ամեն որ ոժանդակող հանձնաժողովներին են հանձնում լրացված բաժանորդագրման թերթերն ու քարտերը: Լիազորներից հավաքված բաժանորդագրման թերթերն ու քարտերը ստուգելով, ոժանդակող հանձնաժողովը հանձնում է նրանք ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությանը հաշվառման համար և բաժանորդագրությունը խնայդրամարկղում ձևակերպելու համար, ինչպես և բաժանորդագրվողների աշխատավարձից բաժանորդագրության մուծումները պահելու համար:

Ձեռնարկության կամ հիմնարկության հաշվային ապարատի աշխատանքի վորակից և կախված փոխառության հաշվառման ու հաշվարկումների դրությունը: Վորպեսզի ապահովել հստակությունը հաշվային ապարատի աշխատանքներում, ոժանդակող հանձնաժողովը ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահության ղեկավարների հետ միասին անց է կացնում հաշվային աշխատողների արտադրական խորհրդակցություն, վորտեղ մանրամասը հրահանգում է նրանց փոխառության հաշվառման ու հաշվարկումների կարգի մասին:

Ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր է ներկայացնել խնայողական դրամարկղը տեղեկանքներ, փոխառության մեջ ընդգրկված բանվորների և ծառայողների քանակի և բաժանորդագրության գումարի մասին: Հուլիսի առաջին քսան օրերում այդ տեղեկանքները ներկայացվում են

ամեն օր, իսկ հետագայում՝ սահմանված ժամկետներին: Ոժանդակող հանձնաժողովը պետք է ստուգի փոխառության շարժման մասին կազմված հաշվապահական տեղեկանքներն ու հաստատի այն հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:

Բաժանորդագրության անցկացումը— դա միայն փոխառության իրացման առաջին շրջանն է: Նրան հաջորդում է յերկրորդ, վորը պակաս կարևոր շրջանը, վորը հասնում է փոխառության բաց թողնելու վերջնական նպատակը՝ դրամների ստացումները: Այդ իսկ պատճառով ոժանդակող հանձնաժողովների աշխատանքը չի կարող սահմանափակվել միայն բաժանորդագրության անցկացումով: Ոժանդակող հանձնաժողովները պետք է սխտեմատիկ, անդադրում հսկողություն սահմանեն փոխառության գումարները ժամանակին և լրիվ չափով խնայողական դրամարկղները հանձնելու համար: Դրա համար, ամենից առաջ, անհրաժեշտ է կանոնավոր կերպով ստուգել թե փոխառությանը բաժանորդագրված բանվորների և ծառայողների աշխատավարձից հաշվապահությունը ճիշտ է արդյոք կատարում մուծումների պահումները:

Կառավարության վորոշման հիման վրա, ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը, Պետական Բանկից աշխատավարձը վճարելու համար դրամը ստանալիս, պետք է Բանկին հանձնի վճարման հանձնարարություն, փոխառության բաժանորդագրության վճարումների դիմաց բանվորների և ծառայողների աշխատավարձից պահված մուծումների գումարները խնայողական դրամարկղ փոխանցելու համար: Ոժանդակող հանձնաժողովները մշտապես պետք է հետեն, վորպեսզի փոխառության մուծումները ժամանակին և լրիվ չափով փոխանցվեն խնայողական դրամարկղները: Մուծումների փոխանցման ձգձգելու դեպքեր հայտնաբերելիս՝ ոժանդակող հանձնաժողովները ամիջապես պետք է հայտնեն խնայողական դրամարկղներին:

Համարյա թե բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկություններում անընդհատ ընդունվում են նոր բանվորներ և ծառայողներ: Ոժանդակող հանձնաժողովները պետք է սխտեմատիկաբար բանվորական ուժի վարձման բաժնից կամ անձնական կազմի սեղանից տեղեկանքներ ստանան նոր ընդունված բանվորների և ծառայողների մասին և բացատրական աշխատանքի միջոցով, ընդգրկելով նրանց փոխառության բաժանոր-

դադրութիւնով, դրանով իսկ ձգտելով աշխատողներին բաժանորդագրութեամբ լրիվ ընդգրկելուն:

Բանվորների և ծառայողների արձակման դեպքում, մինչև փոխառութեան բաժանորդագրութեան գումարի լրիվ վճարումը, այդ բաժանորդներին իրենց կողմից փաստացի վճարած գումարի չափով պարտատոմսեր են տրվում: Ոժանդակող հանձնաժողովները պետք է հետևեն այն բանին, վորպեսզի կոլեկտիվից հետո պարտաւորները հետ հաշվարկումներ կատարելու, նրանց տրվեն իրենց կողմից վճարված պարտատոմսերը:

Փոխառութեան իրացման վերջին շրջանը հանդիսանում է պարտատոմսերը բաժանորդներին հանձնելը: Ձեռնարկութեան կամ հիմնարկութեան հաշվապահութիւնը պարտավոր է բաժանորդներին բաշխել նրանց կողմից վճարված պարտատոմսերը, տրվելիք աշխատավարձի հետ միաժամանակ, վորից պահվում են բաժանորդագրութեան վերջին մուծումները:

Սովորաբար, բաժանորդագրութեան վերջին մուծումը վճարելուց կարճ ժամանակամիջոց անցնելուց հետո տեղի յե ունենում շահումների առաջին խաղարկութիւնը: Պարտատոմսերը ժամանակին չհանձնելը, թեկուզ և առանձին բաժանորդներին կարող է այն բանին հասցնել, վոր այդ բաժանորդները կղրկվեն խաղարկութեան մասնակցելու հնարավորութիւնից: Նման դրութիւն վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ: Ոժանդակող հանձնաժողովները պետք է միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի բոլոր բաժանորդները ժամանակին ստանան իրենց կողմից վճարված պարտատոմսերը:

\* \* \*

Փոխառութեան իրացման բոլոր ետպայներում, սկսած բաժանորդագրութեան անցկացնելուց և վերջացրած բաժանորդներին պարտատոմսեր բաշխելուց, պետվարկին և խնայգործին ոժանդակող հանձնաժողովներին է պատկանում ակտիվ դերը: Ամեն մի ոժանդակող հանձնաժողովի պատվի գործն է— բոլշեփիկորեն կատարել իր վրա դրված խնդիրները, ազահովել Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժին) փոխառութեան հաշող իրացումը:

3051  
38



Տեխ. ձևավոր. և սրբ. Ա. ՀԱՆՎԵՐԴՅԱՆԻ

---

ԵՆՈՐՏՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԻՆՈՒԹՅԱՆ ՏԳԱՐԱՆ

Գլավիտ № 6650 Պատվեր № 450 Տիրած 5000